

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրմանն ուղղված  
աշխատանքների արդյունքները ճանաչելու մասին**

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի X բաժնի համաձայն (այսուհետ՝ պայմանագիր) եւ դրանով սահմանվում են համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրմանն ուղղված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման պայմանները:

2. Սույն Արձանագրության մեջ գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«բողոքարկում»՝ համապատասխանության գնահատման մարմնի դիմելը հավատարմագրման մարմին՝ համապատասխանության գնահատման տվյալ մարմնի առնչությամբ հավատարմագրման մարմնի կողմից ընդունված որոշումը վերանայելու հարցով,

«հավատարմագրման փորձագետի ատեստավորում»՝ սահմանված պահանջներին ֆիզիկական անձի համապատասխանության հաստատումը եւ հավատարմագրման աշխատանքների անցկացման համար նրա իրավասության ճանաչումը,

«բողոք»՝ դիմում, որը պարունակում է համապատասխանության գնահատման մարմնի կամ հավատարմագրման մարմնի գործողությունների (անգործության) նկատմամբ դժգոհության արտահայտությունը՝ ցանկացած անձի կողմից, եւ որը պահանջում է պատասխան,

«հավատարմագրման համար դիմող»՝ իրավաբանական անձը, որը գրանցված է անդամ պետության օրենսդրության համաձայն, եւ հավակնում է հավատարմագիր ստանալուն՝ որպես համապատասխանության գնահատման մարմին,

«հավատարմագրման մարմին»՝ մարմինը կամ իրավաբանական անձը, որը, անդամ պետության օրենսդրության համաձայն, լիազորված է հավատարմագրում անցկացնելու համար,

«տեխնիկական փորձագետ»՝ հավատարմագրման որոշակի բնագավառում հատուկ գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձը, որը հավատարմագրման մարմնի կողմից ներգրավվում եւ նշանակվում է համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար եւ ներառված է տեխնիկական փորձագետների գրանցամատյանում,

«հավատարմագրման փորձագետ»՝ ֆիզիկական անձը, որն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորված եւ նշանակված է հավատարմագրման մարմնի կողմից՝ համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում անցկացնելու համար, եւ որը ներառված է հավատարմագրման փորձագետների գրանցամատյանում:

3. Անդամ պետությունները հավատարմագրման բնագավառում օրենսդրության ներդաշնակեցումն իրականացնում են հետեւյալ կերպ.

հավատարմագրման բնագավառում կանոնների ընդունմամբ՝ հավատարմագրման միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ընդունված միջազգային ստանդարտների ու այլ փաստաթղթերի հիման վրա,

հավատարմագրման բնագավառում միջազգային ստանդարտների կիրառմամբ, որոնք մշակվել են միջազգային ստանդարտների հիման վրա,

միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր համեմատությունների) անցկացման ապահովմամբ եւ կազմակերպմամբ,

հավատարմագրման բնագավառում տեղեկատվության փոխանակմամբ՝ տեղեկատվության հրապարակայնության, այն անհատույց եւ ժամանակին տրամադրելու սկզբունքների հիման վրա:

Անդամ պետությունները փոխադարձ ճանաչում են համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) հավատարմագրումն անդամ պետությունների հավատարմագրման ազգային համակարգերում՝ հավատարմագրման մարմինների կողմից պայմանագրի 54-րդ հոդվածի դրույթներն իրականացնելիս:

4. Հավատարմագրման մարմիններն իրականացնում են հետեւյալ լիազորությունները.

1) իրականացնում են ստորեւ նշվածների կազմավորումն ու վարումը՝ համապատասխանության գնահատման հավատարմագրված մարմինների գրանցամատյանի,

հավատարմագրման փորձագետների գրանցամատյանի,

տեխնիկական փորձագետների գրանցամատյանի,

Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական գրանցամատյանի ազգային մասի,

2) Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ են ներկայացնում տեղեկություններ՝ համապատասխանության գնահատման հավատարմագրված մարմինների, հավատարմագրման փորձագետների եւ տեխնիկական փորձագետների գրանցամատյաններից, ինչպես նաեւ՝ հավատարմագրմանն առնչվող եւ պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ ու փաստաթղթեր,

3) հավատարմագրման մարմինների ներկայացուցիչներին ընձեռում են փոխադարձաբար համեմատելի գնահատումներ կատարելու հնարավորություն՝ անդամ պետություններում կիրառվող ընթացակարգերի համազորություն ապահովելու նպատակով,

4) քննարկում եւ կայացնում են որոշումներ՝ համապատասխանության գնահատման մարմինների ներկայացրած այն բողոքարկումների առնչությամբ, որոնք վերաբերում են համապատասխանության գնահատման այդ մարմինների առնչությամբ հավատարմագրման մարմնի կայացրած որոշումները վերանայելու հարցին,

5) քննարկում եւ կայացնում են որոշումներ այն բողոքների առնչությամբ, որոնք ստացվում են անդամ պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից՝ հավատարմագրման մարմինների, ինչպես նաեւ՝ իրենց կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների գործունեության վերաբերյալ,

5. Հավատարմագրման մարմինն իր մասին արդի տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով՝ համացանցում՝ Միության պաշտոնական կայքում տեղադրելու համար:

6. Հավատարմագրման փորձագետների եւ տեխնիկական փորձագետների իրավասության համարժեք մակարդակ ապահովելու նպատակով հավատարմագրման

մարմիններն ապահովում են հավատարմագրման փորձագետների և տեխնիկական փորձագետների իրավասությանը ներկայացվող պահանջների ներդաշնակեցումը:

---